ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Պ Ե Տ Ր Ո Ս Յ Ա Ն Ա Ն Ն Ա Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ի

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ձ. Հ. Գյուլամիրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լ. Ա. Սահակյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Գ. Հ. Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հոկտեմբերի 23-ին՝ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375000, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. սեպտեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: XX դարի վերջին տասնամյակում սկսվեց և XXI դարի սկզբում առանձնահատուկ քննարկման նյութ դարձավ կրթության գործընթացի անհատակողմնորոշվածության սկզբունքը, որը հատկապես կարևորվում է նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելիս:

Անհատակողմնորոշիչ ուսուցման սկզբունքի համաձայն ուսումնական գործընթացի կենտրոնում՝ գլխավոր դերում աշակերտն է, նրա շահերը, հակումներն ու հետաքրքրությունները, պահանջմունքների ըմբռնումը, ուսումնական գործընթացում նրա ակտիվ մասնակցության ապահովումը:

Այս ամենը հատկապես կարևորվում է 6 տարեկաններով համալրված առաջին դասարանում, քանզի այդ երեխաները, դպրոց մտնելով, հայտնվում են նոր հասարակական միջավայրում՝ իրենց համար գրեթե անծանոթ, նոր սոցիալական պայմաններում: Անառարկելի է, որ ոչ բոլոր երեխաներն են մանկապարտեզից դպրոց եկել և ոչ բոլոր երեխաներն են այդ տարիքում ունենում հաղորդակցական, համագործակցային ունակությունների անհրաժեշտ մակարդակ: Առաջին դասարանցիների համար չափազանց դժվար է հաղթահարել մինչ այդ իրենց անծանոթ գործունեության ձևի խոչընդոտները, անծանոթ հարաբերությունները և դրանցից բխող բարդությունները, նոր՝ աշակերտի կարգավիճակը և այլն: Հասարակական նոր կարգավիճակը՝ աշակերտի դերն իր հերթին երեխային դնում է բոլորովին այլ հարաբերություններ ստեղծելու խնդրի առջև. աշակերտ, համադասարանցիներ, գործընկերներ, դպրոցական կոլեկտիվի անդամ և այլն: Այս ամենը նրանից պահանջում է վարքի այլ դրսևորումներ, պատասխանատվության նոր որակ, նրան տալիս է այլ իրավունքներ:

Մեր երկարամյա աշխատանքային պրակտիկայի և նպատակային ուսումնասիրությունների ընթացքում (շուրջ 25 տարի) մի քանի անգամ փոխվել է ուսուցման մեկնարկային տարիքը: Այդ ժամանակահատվածում մենք ականատեսն ու մասնակիցն ենք եղել մի դեպքում՝ յոթ, մեկ այլ դեպքում՝ վեց, վերջին տարիներին արդեն՝ 6 տարեկան երեխաների ուսումնական գործընթացում, մասնավորապես՝ նրա սկզբում աշակերտ դարձած նախադպրոցականների կրած դժվարությունների հաղթահարման գործընթացին: Այդ դժվարությունների մեջ ամենածանրը ուսումնական ծրագրային խնդիրների լուծման իմաստով գրաճանաչության կազմակերպման շրջանն է, որի ընթացքում աշակերտները պիտի հաղթահարեն բազմաուղղություն հոգեբանական, կազմակերպական և ուսումնական խոչընդոտներ: Որո՞նք են դրանք, ինչպե՞ս են հաղթահարվում, ինչպե՞ս պիտի կազմակերպել երեխայի կյանքի այդ հատվածը, որպեսզի չխաթարվի նրա առողջությունը, չմարեն նրա սովորելու ցանկությունն ու դրդապատճառները: Եվ վերջապես, ինչպե՞ս են երեխաների գրաճանաչությունը

կազմակերպել մեր նախնիները, և նրանց մոտեցումներից որո՞նք են մեզ հասել ու կիրառվում արդի պրակտիկայում:

Այսպիսով, մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ընդունված «Կրթության օրենքով» սահմանված 6 տարեկանից ուսուցումը սկսելու որոշմամբ, վաղ ուսուցմամբ պայմանավորված ծրագրային նոր պահանջներով և գրաճանաչության կազմակերպման գործընթացի իրականացման վերոնշյալ խնդիրների՝ այսօրվա համար հույժ կարևորությամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հայոց լեզվի գրաճանաչության պատմության մեջ գոյություն ունեցող փորձն ու զարգացման ընթացքը, այդ տեսանկյունից դիտարկել Հայաստանի Հանրապետությունում, ԼՂՀ-ում և Սփյուռքում գործածության մեջ գտնվող հայոց լեզվի այբբենարանները և վերլուծել ԼՂՀ քառամյա տարրական դպրոցում գրաճանաչության կազմակերպման պրակտիկան 6 տարեկան երեխաներով համալրված առաջին դասարաններում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել հայոց լեզվի մեթոդիկայի պատմության՝ ինչպես արևմտահայ, այնպես էլ՝ արևելահայ հատվածում գրաճանաչության մեթոդների ընդունելի և ժխտելի կողմերը, դրանց վերաբերյալ վերլուծական մոտեցումները հայ մանկավարժության պատմության մեջ:

2. Դիտարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քառամյա կրտսեր դպրոցում գրաճանաչության կազմակերպման ընթացքը, բացահայտել առկա դժվարություններն ու դրանք ծնող պատճառները:

3. Ուսումնասիրել ուսումնական տարվա ավարտին ԼՂՀ 6 տարեկաններով համալրված առաջին դասարանների աշակերտների կարդալու կարողությունների և խոսքի զարգացման մակարդակները: Նախագծել և ստուգել վաղ ուսուցման պայմաններում սովորողներին գրաճանաչ դարձնելու գործընթացի 3 փուլերում ծագած դժվարությունների հաղթահարմանը և արդյունավետության բարձրացմանը միտված մեր մշակած գիտամեթոդական երաշխավորությունները:

4. Ամփոփել ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերած եզրահանգումները, գրաճանաչության գործընթացի և սովորողների կարդալու կարողությունների ձևավորման ուղղությամբ մշակել մեթոդական երաշխավորություններ և պահանջ – կողմնորոշումներ ինչպես գրաճանաչության գործընթացի, այնպես էլ ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ:

5. Ուսումնասիրել գրաճանաչության կազմակերպման գործընթացի առանձնահատկությունները սակավակազմ դպրոցներում, դրանց հիման վրա մշակել ուսումնական նոր համալիր (այբբենարան, ուղեցույց և ուսումնաօժանդակ նյութեր)՝ որոնց մեջ հաշվի առնված կլինեն ոչ միայն տարբեր տարիքի երեխաներով համալրված ուսումնական

խմբին գրաճանաչ դարձնելու գործընթացի առանձնահատկությունները, այլև այդ գործընթացը անհատակողմնորոշված դարձնելու խնդիրը:

Հետազոտության օբյեկտը հայ երեխաներին գրաճանաչ դարձնելու մեթոդների և դրանց բաղադրամասերի պատմական զարգացման ընթացքն է՝ լեզվական, հոգեբանամանկավարժական այն սկզբունքները, որոնք ընկած են ժամանակակից գրաճանաչության մեթոդիկայի հիմքում:

Հետազոտության առարկան ԼՂՀ դպրոցներում սովորող աշակերտների գրաճանաչության կազմակերպման գործընթացն է՝ իր մեթոդաբանական հիմքով, ուսուցիչների պրակտիկ կարողություններով և աշակերտների աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակադրումով, այդ գործընթացում ակնհայտ դժվարություններով, դրանց կանխմանը միտված հոգեբանամանկավարժական սկզբունքային մոտեցումներով:

Հետազոտության վարկածը: Հայ գրաճանաչության մեթոդիկայի պատմությունը հարուստ է գրաճանաչության կազմակերպման ուղղությամբ ուսանելի տեսությամբ և այսօր էլ արդիական մեթոդական երաշխավորություններով. հայ երեխաների գրաճանաչության գործընթացն արդյունավետ կընթանա, եթե՝

ա) մանրամասն ուսումնասիրվեն հայ գրաճանաչության պատմության մեջ գոյություն ունեցող մեթոդները և դրանցից պատմականորեն արդարացվածները գիտականորեն հիմնավորված օգտագործվեն 6 տարեկաններով համալրված առաջին դասարաններում,

բ) մշակվի և հիմնավորվի 6 տարեկաններով համալրված առաջին դասարաններում գրաճանաչության կազմակերպման արդյունավետ մեթոդների համալիր,

գ) 6 տարեկանների համար այբբենարանների ստեղծման գործընթացում հաշվի առնվեն ոչ միայն պատմականորեն արդարացված գրաճանաչության մեթոդները, այլև դասընթացի բովանդակությունը խարսխվի անհատակողմնորոշված աշակերտակենտրոն ուսումնական գործունեության վրա՝ գրաճանաչությունը կազմակերպելով «խաղալով սովորենք» սկզբունքով:

Հետազոտության գիտամեթոդական հիմք են հանդիսացել հայ դասական և ժամանակակից լեզվաբանների, մանկավարժների, հոգեբանների, հայոց լեզվի և տարրական ուսուցման մեթոդիկայի այն գիտական դրույթները, որոնք դիտարկվում են նշված գիտությունների կողմից. Մ. Մաշտոցի՝ նշանագրերի մեթոդի հիմնադրումը և գրաճանաչության առաջին մեթոդի կիրառումը, Հ. Հինդլյանի՝ ամբողջական բառերով կարդալ սովորեցնելու մեթոդը, Ն. Տեր-Ղևոնդյանի՝ հնչական մեթոդի առավելությունների հիմնավորումը, Լ. Շանթի՝ «Լուսաբեր» այբբենարան - ընթերցարանի գիտամեթոդական հիմունքները, Ա. Բահաթրյանի, Թ. Խզմալյանի, Խ. Աբովյանի՝ գրաճանաչության արդյունավետ մեթոդների հիմքում ընկած սկզբունքները, Ղ. Աղայանի՝ հնչյունային մեթոդի առավելության մանկավարժական հիմնավորումը, Ա. Տեր-Գրիգորյանի, Ձ. Գյուլամիրյանի՝

հնչյունային մեթոդի պատմականորեն արժեքավոր կողմերի վերլուծությունն ու դրանց գործնական կիրառման սկզբունքները:

Հետազոտության մեթոդները: Նկատի ունենալով հետազոտվող հիմնախնդրի նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև մեր մասնագիտական գործունեության ոլորտը՝ հետազոտությունն իրականացրել ենք հետևյալ մեթոդներով.

1. Փորձարարական մեթոդներ. կիրառվել են թեստային, դիտման, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման, սովորողների ներկայացուցչական կազմով դասարաններում ծրագրավորված փորձարարական դասերի վարման և ունկնդրման, դրանց արդյունքների վերլուծության, համակարգման մեթոդներ:

2. Փորձարարական և ստուգողական դասարաններում իրականացրել ենք փաստահավաք դասալսումներ, մեր մշակած նոր դասի մոդելի պլան-կոնսպեկտով գրաճանաչության փորձնական դասեր, արդյունքների ամփոփում, փաստագրական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության բազա է հանդիսացել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի 12 միջնակարգ դպրոցի 30 դասարանների՝ 718, Մարտակերտի շրջանի 7 դպրոցների 7 դասարանի՝ 88, Ասկերանի շրջանի 5 դպրոցների 7 դասարանի՝ 75, Մարտունու շրջանի 9 դպրոցների՝ 121, Հադրութի շրջանի 7 դպրոցների՝ 87, Շուշիի շրջանի 1 դպրոցի՝ 16, Քաշաթաղի շրջանի 2 դպրոցների՝ 13, Շահումյանի շրջանի 1 դպրոցի 5 աշակերտներ:

Ուսումնասիրությունների արդյունքներն աղյուսակների ձևով կցված են ատենախոսությանը (տե՛ս հավելված 1):

Ատենախոսության փուլերը.

Առաջին փուլում (1994-1997թթ.) ուսումնասիրել ենք գրաճանաչության մեթոդների պատմական զարգացումը հայ դպրոցում (արևելահայ և արևմտահայ), բացահայտել և համակարգել ենք մինչխորհրդային շրջանի մանկավարժների գրաճանաչության գործընթացի վերաբերյալ գիտամեթոդական հայեցակարգային մոտեցումները:

Երկրորդ փուլում (1998-2002թթ.) ուսումնասիրել ենք Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում, ինչպես նաև Սփյուռքում գործածության մեջ գտնվող այբբենարանները, ուսումնասիրել Հայաստանում տպագրված այբբենարանների գործադրման պրակտիկան ԼՂՀ-ում, առաջին դասարանների ուսուցիչների հետ միասին կազմակերպել ենք գրաճանաչության փորձարարական և ցուցադրական դասեր, ինչպես նաև՝ առաջավոր փորձի ուսումնասիրում, փոխանակում և վերապատրաստման դասընթացներ:

Երրորդ փուլում (2003-2006թթ.) ուսումնասիրել ենք գրաճանաչության կազմակերպման գործընթացը 5.5-6 տարեկաններով համալրված քառամյա կրտսեր դպրոցի առաջին դասարաններում, փորձարկել ենք կրթական նոր ծրագրերով նախատեսված աշակերտակենտրոն, անձնակողմնորոշված կրթության իրականացման հնարավորու-

թյունները նշված դասարաններում, վերահսկողական – ամփոփիչ ուսումնասիրություններ ենք կատարել վաղ ուսուցման կազմակերպման առաջին երկու ուսումնական տարիների արդյունքների ստուգման և ընդհանրացման ուղղությամբ:

Չորրորդ փուլում (2007-2008թթ.) ամբողջացրել ենք և շարադրել մեր ուսումնասիրությունների արդյունքները, դրանք ներդրել ԼՂՀ տասներկուամյա հանրակրթական դպրոցների առաջին դասարաններում, ինչպես նաև սակավակազմ դպրոցներում:

Հետազոտությանգիտական նորույթը.

- հայ դպրոցում գրաճանաչության մեթոդիկայի պատմական զարգացման ընթացքն ուսումնասիրվել է քառամյա տարրական դպրոցում վաղ ուսուցման պայմաններում գրաճանաչության գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման տեսանկյունից,
- ուսումնասիրվել են ինչպես պատմական անցյալում, այնպես էլ արդի շրջանում գործող հայկական այբբենարանները, դրանց՝ անհատակողմնորոշված ուսուցման մանկավարժահոգեբանական սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից,
- դիտարկվել են վաղ ուսուցման պայմաններում սովորողներին գրաճանաչ դարձնելու գործընթացը ԼՂՀ տասներկուամյա դպրոցի առաջին դասարաններում (նաև՝ սակավակազմ), այդ գործընթացում աշակերտակենտրոն և անհատակողմնորոշիչ մոտեցումների կիրառման հնարավորություններն ու ազդեցությունը աշակերտների անձի զարգացման գործընթացի արդյունավետության վրա և կատարվել են համապատասխան եզրահանգումներ.

1. Դպրոցական ուսումնառությանը պատրաստ լինել չի նշանակում միայն գրել-կարդալ, հաշվել իմանալ, այլ ընդգրկում է երեխայի անձի բոլոր կողմերը՝ սկսած ֆիզիկական զարգացումից մինչև որոշակի գիտելիքների և կարողությունների առկայությունը: Սովորաբար առանձնացվում են երեխաների՝ դպրոցին պատրաստվածության հիմնախնդիրների չորս խումբ՝սոցիալական,ֆիզիկական,հուզակամային,իմացական:

Վեց տարեկան երեխաների՝ ուսումնական գործունեությանը պատրաստվածության նշված հիմնախնդիրներին պետք է մանրամասնորեն ծանոթ լինի առաջին դասարանում դասավանդող յուրաքանչյուր ուսուցիչ և հաշվի առնի դրանք իր աշխատանքային գործունեության ընթացքում:

2. Անհրաժեշտ է վերականգնել 6 տարեկան երեխաներին մինչև ուսումնական տարվա սկիզբը դպրոց հրավիրելու նախկին ավանդույթը՝ նրանց դպրոցին հոգեբանորեն նախապատրաստելու և մի շարք կազմակերպական խնդիրներ լուծելու համար:

3. Մեր մանկավարժական պրակտիկայում և հատուկ ուսումնասիրությունների ընթացքում համոզվել ենք, որ վանկային մեթոդի կիրառումն առավել դյուրին է դարձնում սովորողների կարդալու կարողության ձևավորման գործընթացը. երեխաներն ավելի քիչ ջանքերով, ավելի մեծ հաջողություններ են ձեռք բերում:

4. Առաջարկում ենք այբբենարաններում չսահմանափակվել միայն նախաայբբենական շրջանում նախադասության կամ բառի գծապատկերը կազմելու առաջադրանքներով. այդ ուղղությամբ աշխատանք տանել նաև այբբենական շրջանում:
5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 6 տարեկան երեխան իր ուշադրությունը դժվարությամբ է տեղափոխում գործունեության մի ձևից մյուսը դասագործընթացում անցկացվող ֆիզկուլտդադարները, դիդակտիկ խաղերը, քարտային աշխատանքները կազմակերպել պայմանավորված դասի բովանդակությամբ:
6. Նկատի ունենալով, որ բարբառախոսությունը և դրանից բխող լեզվաարտասանական թերությունները լրջորեն խանգարում են գրաճանաչության գործընթացի արդյունավետությանը և բացասականորեն ազդում խոսքի մշակույթի ձևավորման վրա՝ գրաճանաչության շրջանի կարևոր խնդիրներից համարել բարբառներից երեխաների խոսքի ձերբազատումը՝ այն համարելով ծրագրային պահանջ:

Հետազոտության տեսական նշանակությունը:

- Համակարգվել են հայ դպրոցում սովորողների գրաճանաչության կազմակերպման պատմական մոտեցումները, դրանք դիտարկվել այբբենարանագիտության մեջ ընդունված մեթոդամանկավարժական սկզբունքների տեսանկյունից:
- Ուսումնասիրվել են տասներկուամյա հանրակրթական դպրոցի առաջին դասարանում գրաճանաչության կազմակերպման և կարդալու նախնական կարողության ձևավորման գործընթացները, ինչպես նաև առաջին ուսումնական տարում սովորողների՝ այդ ուղղությամբ ձեռք բերած կարողությունների մակարդակները:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Մեր ուսումնասիրության ճանապարհով ձեռք բերած և տեսականորեն համակարգված համալիր տեղեկությունները, ինչպես նաև գործնական եզրակացություններն ու դրանց հիման վրա սահմանված ամփոփումները կարող են պիտանի լինել ինչպես տեսաբան մեթոդիստներին, այնպես էլ դասագրքաստեղծ համախմբերին և կրտսեր դպրոցականների հետ տարվող կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությամբ շահագրգիռ բոլոր մասնագետներին:

Պաշտպանության ենք ներկայացնում հետևյալ դրույթները.

1. Հայ գրաճանաչության պատմությունը հարուստ է երեխաներին գրաճանաչ դարձնելու արդյունավետ պրակտիկայով և դրա վրա հիմնված տեսությամբ, որոնց մեջ առկա բազմաթիվ մեթոդական մոտեցումները և գործնական հանգուցալուծումներն այսօր էլ արդիական են ու կիրառելի ինչպես քառամյա կրտսեր դպրոցում, այնպես էլ սակավակազմ դպրոցներում:

2. Առաջնորդվելով գրաճանաչության գործընթացի ավանդական և ժամանակակից մոտեցումներով՝ շահեկան է այն կազմակերպելիս կիրառել աշակերտակենտրոն, անձնակողմնորոշիչ նոր մեթոդներ՝ փոխելով, ճկուն դարձնելով գրաճանաչության դասի կառուցվածքը, հաշվի առնելով գրաճանաչ դարձող սերունդների միջև գոյություն ունեցող

մտավոր, ֆիզիկական, հոգեբանական, տարիքային և այլ տարբերությունները, նրանց՝ բազմաբնույթ մտածողության ընձեռած լայն հնարավորությունները:

3. Հաշվի առնելով, որ գրաճանաչության ուսուցման փուլի վերջնանպատակը սովորողների՝ հասկանալով կարդալու և գրելու կարողությունների ձևավորումն է, և աշխատանքն այբբենարանով համարվում է արդյունավետ, եթե ուսումնական տարվա ավարտին աշակերտները ձեռք են բերել կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ տարրական մակարդակով ընթերցելու ունակություն, անհրաժեշտ է գրաճանաչության գործընթացն արդիականացնել մասնավորապես անհատակողմնորոշված, աշակերտակենտրոն ուսումնական գործընթացին ներկայացվող պահանջների տեսանկյունից:

4. Գրաճանաչության թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից մեթոդներն արդյունավետ են նաև սակավակազմ դպրոցներում (ինչպես երկհամակազմ, այնպես էլ՝ միահամակազմ), եթե գրաճանաչությունն իրականացնող ուսուցիչները մեթոդապես պատրաստ են կրթության կազմակերպման այդպիսի ձևի իրականացմանը, ինչպես նաև այբբենարաններում հաշվի են առնված նշված դպրոցների բազմաբնույթ առանձնահատկությունները:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են դիտարկվող հիմնախնդրի շուրջ առկա լեզվաբանական, մեթոդական, մանկավարժահոգեբանական այն պատմական և արդիական դիդակտիկական դրույթներով, որոնք ընկած են մեր քսանամյա մանկավարժական պրակտիկայի և այդ ընթացքում իրականացրած նպատակային ուսումնասիրությունների հիմքում, ինչպես նաև այս գործընթացում աշակերտների և ուսուցիչների ընդարձակ քանակական ընդգրկումով, մեր հիմնախնդրի ոլորտում տեսական և գործնական անձնական ներդրումով:

Հետազոտության արդյունքների ներդրումը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված երաշխավորություններով այսօր առաջնորդվում են ԼՂՀ բոլոր (թվով՝ 230) քառամյա տարրական դպրոցների առաջին դասարանների ուսուցիչները, որոնք խնդրո հարցի ուղղությամբ վերապատրաստվել են մեր մշակած ծրագրով և մեթոդիկայով:

Մեր հետազոտական աշխատանքների և դրանց արդյունքների շուրջ բազմիցս հանդես ենք եկել ինչպես ԱրՊ համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում, այնպես էլ ԼՂՀ և ՀՀ մանկավարժական մամուլում, հրատարակել ենք մեթոդական գրքույկներ և ուսումնաօժանդակ ձեռնարկներ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն կազմում է համակարգչային շարվածքի 160 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է դիտարկվող հիմնախնդրի հրատապությունը, որոշվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպվել է աշխատանքային վարկածը: Ներկայացվել են հետազոտության գիտամեթոդական հիմքերը, մեթոդները, նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Հետազոտության առաջին՝ «Գրաճանաչության գործընթացի պատմական նախադրյալները հայ դպրոցում» գլխի առաջին՝ «Գրաճանաչության գործընթացը նախաաբովյանական շրջանի հայ դպրոցում» ենթագլխում ներկայացրել ենք գրաճանաչության գործընթացի առանձնահատկությունները նախաաբովյանական շրջանում: Մասնավորապես քննարկել ենք Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի ստեղծման պատմության մեթոդական կողմը՝ հիմնականում հիմք ընդունելով պատմական սկզբնաղբյուրները:

Առաջին գլխի երկրորդ՝ «Գրաճանաչության կազմակերպումն Արևմտյան Հայաստանում» ենթագլխում քննարկում ենք Արևմտյան Հայաստանում գրաճանաչության կազմակերպման գործընթացի ինքնատիպ մեթոդներն ու դրանց հիման վրա ստեղծված այն այբբենարանները:

Հովհաննես Հինդլյանը (1866-1950թթ.) գտնում էր, որ ժամանակակից դպրոցը պարտավոր է «հոգ տանել տղոց առողջության նկատմամբ, կերտել նկարագիրը, մշակել միտքը, աղեկ քաղաքացի, աղեկ ամուսին, աղեկ ծնողք, աղեկ գործի մարդ պատրաստել, կյանքի մեջ անմիջապես կիրարկելի անհրաժեշտ գիտելիք տալ»[1]:

Գալուստ Մալաթյանի կարծիքով գրաճանաչության ուսուցումը «մեքենական գործ մը չէ», - նշում է Ա. Ու Վարդանյանը: «Զորացուցիչ, կրթիչ աշխատություն մը նկատուած է ան»: Նրա արդի մանկավարժությունը ընթերցումը իբրև նպատակ չի դավանում: Գրաճանաչության ուսուցումը գաղափարներ ավանդելու, զգացմունքներ մշակելու ու կամք կազմելու միջոց է, իսկ գրելը կրավորական երևույթ չէ, այլ երեխայի «մտքին գիտակցական մեկ զորացումը նշաններուն մեջ»[2]:

Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի այբբենարանը կազմված էր հնչական մեթոդով և կրում էր Կ. Դ. Ուշինսկու ազդեցությունը:

1884 թ. Նոր Նախիջևանում հրատարակվեց Հ. Գալստյանի «Այբբենարան և առաջին ընթերցարան հայերեն լեզվի Նախիջևանի և Պեսարապիո վիճակին հայ դպրոցներու համար» դասագիրքը: Այս այբբենարանը ևս կազմված է հնչական մեթոդի համաձայն: 1866թ. Երևանում 18 էջի վրա հրատարակվեց Աբգար Գյուլամիրյանի «Հայերեն լեզվի նոր ձևով գործնական և պատկերազարդ այբբենարանը»:

---

[1]Վարդանյան Ա., «Գրաճանաչության ուսուցման տեսական հիմունքները», -Եր., «Միտք », 1970, էջ 66:
[2]Նույն տեղում:

1906թ. Ալեքսանդրապոլում հրատարակվեց Հովհ. Արաբաջյանի «Ոսկե այբբենարան»-ը:

Նշված բոլոր այբբենարանները նախատեսված էին 7-8 տարեկան երեխաների համար, որոնք ոչ մի չափանիշով չեն համապատասխանում այսօրվա 7-8 տարեկանների առանձնահատկություններին, առավել ևս դրանց գործածումն անարդյունավետ կլիներ 6 տարեկաններով համալրված 1-ին դասարաններում:

1907թ. Թիֆլիսում լույս տեսավ Ստեփան Լիսիցյանի, Հովհաննես Թումանյանի և Լևոն Շանթի «Լուսաբեր» այբբենարանն ու առաջին ընթերցարանը, որը լուրջ առաջընթաց էր այբբենարանագիտության մեջ:

Հայերենի այբբենարանագիտության մեջ որոշակի նորություն էր նաև 1909 թ. Թիֆլիսում հրատարակված Արշակ Չիլինկարյանի, Տիգրան Ռաշմաճյանի և Ավետիք Իսահակյանի «Դասընկեր» այբբենարան - ընթերցարանը: Այս այբբենարանը մինչև 33-րդ էջը ձեռագիր է:

Առաջին գլխի երրորդ՝ «Գրաճանաչության կազմակերպումը նախախորհրդային հայ դպրոցում» ենթագլխում ներկայացվել են նախախորհրդային հայ դպրոցում գործածվող գրաճանաչության կազմակերպման մեթոդները և դասագրքերը:

Խ. Աբովյանն ամեն ջանք գործադրեց, որպեսզի փոխի գրաճանաչության բնագավառում գոյություն ունեցող վիճակը, ուսուցումը երեխաների համար դարձնի հաճելի, հեշտ ու արդյունավետ: Դրա համար նա առաջարկեց գրաճանաչության ուսուցման բոլորովին այլ եղանակ. «Զամենայն տառս պարտ է ըստ բնական հնչմանն արտասանել»:[1]

Աբովյանից հետո գրաճանաչության ուսուցման հնչական մեթոդի պաշտպանությամբ 1869 թվականին հանդես եկավ Սեդրակ Մանդինյանը:

Հայ դպրոցում գրաճանաչության ուսուցման հնչական մեթոդի գործադրման այլ փորձեր ևս եղել են: Սակայն այդ հիմնախնդրի շուրջ ավելի վճռական ու հիմնավոր խոսք ասաց հայ մեծ մանկավարժ Ղազարոս Աղայանը:

Գրաճանաչության ուսուցման հնչյունային մեթոդի մասին խոսել են նաև այլ հայ մանկավարժներ՝ Ն. Տեր-Ղևոնդյանը, Հ. Ղուկասյանը, Հ. Նազարյանը (80-ական թ-ններին), իսկ ավելի ուշ՝ Թ. Խզմալյանը, Տ. Ռաշմաճյանը և Գ. Էդիլյանը (1900-ական թվականների սկզբներին):

Ատենախոսության երկրորդ՝ «Գրաճանաչության մեթոդներն ու դրանցով ստեղծված այբբենարանները խորհրդային Հայաստանում» գլխի առաջին՝ «Գրաճանաչության գործընթացի առանձնահատկությունները խորհրդահայ դպրոցի առաջին շրջանում» ենթագլխում ներկայացվել են խորհրդահայ դպրոցի առաջին շրջանում իրականացվող գրաճանաչության գործընթացի առանձնահատկությունները:

[1] Աբովյան Խ., Նախաշավիղ կրթության ի պետս Նորավարժից, մասն 1, Տփխիս, տպ. Գ. Մելքումյանի և Հ. Էնֆիաճյանի,1862,էջ10-11:

Մասնավորապես վերլուծվել են գրաճանաչության կազմակերպման մաքուր, բնական (Գ. Էդիլյան), ամբողջական բառապատկերների կամ ամերիկյան (Զ. Աճեմյան, Լ. Խուդոյան), վերլուծական - համադրական (Ղ. Աղայան, Ա. Ճուղուրյան, Ա. Տեր - Գրիգորյան, Զ. Գյուլամիրյան) մեթոդները և ներկայացվել դրանց արդյունավետությունը հիմնավորող մոտեցումները հայ մեթոդիկայում:

Գրաճանաչության գործընթացի արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորելով ընտրված մեթոդով՝ ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ «Գրաճանաչության կազմակերպման մեթոդների կատարելագործումն ու կիրառումը 20-րդ դարի երկրորդ կեսին» ենթագլխում մենք հանգամանորեն վերլուծում ենք վերլուծական - համադրական հնչյունավանկային և վերլուծական - համադրական հնչյունաբառային կամ գլոբալ մեթոդները:

Հայաստանում 6 տարեկաններով համալրված նախապատրաստական դասարանների համար ստեղծվեց «Արևիկ» այբբենարանը[1], որի նախաայբբենական շրջանում նախատեսվում էր 3-4 տեսակի աշխատանքների համալիր:

Վերլուծական-համադրական մեթոդով հետագա տարիներին այբբենարան կազմվեց նաև ՀՀ ոչ հայկական դպրոցների համար (Զ. Գյուլամիրյան, Ս. Ղալթախչյան):

Վերլուծական - համադրական հնչութաբառային մեթոդով հետագայում կազմվեց նաև Զ. Գյուլամիրյանի «Զանգակ» այբբենարանը՝ իր 4 մաս տպագիր հիմքով տետրերով:

Այս գլխի երրորդ՝ «Գրաճանաչության կազմակերպումը արդի հայ դպրոցում» ենթագլխում քննության է ենթարկվում արդի հայ դպրոցում իրականացվող գրաճանաչության գործընթացը:

1970 թվականից Հայաստանում շուրջ 25 տարի գործածության մեջ էր Ա.Տեր-Գրիգորյանի և Ա. Ու. Վարդանյանի «Այբբենարան»-ը:

Ա. Տեր-Գրիգորյանը վերլուծական - համադրական հնչութաբառային կամ գլոբալ մեթոդին անդրադարձավ ավելի ուշ (1983թ.) նախապատրաստական դասարանների համար հրատարակված «Արևիկ» այբբենարանում:

ԼՂՀ-ի հանրակրթական դպրոցների առաջին դասարանների համար 2005թ. երաշխավորվել է Վ. Սարգսյանի «Այբբենարանը»: Թեև մեր տարածաշրջանում այսօր գործածության մեջ է միայն այդ այբբենարանը, այնուամենայնիվ, մենք դիտարկել ենք նաև Ա. Քյուրքչյանի և Լ. Տեր-Գրիգորյանի այբբենարանի մանկավարժական սկզբունքները ևս:

Վ. Սարգսյանի այբբենարանում ներկայացված սկզբունքով 7 տարեկաններին գրաճանաչ դարձնելու ուղղությամբ գիտափորձ անցկացրինք Ստեփանակերտի հ. 7 միջնակարգ դպրոցում, Մարտակերտի շրջանի Հար. Գոմերի միջնակարգ դպրոցում, Հադրութի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում:

[1]Տեր-Գրիգորյան Ա. Ե., «Արևիկ այբբենարան», 8-րդ հրատարակ., -Եր., «Լույս», 1990:

Երրորդ՝ «Գրաճանաչության կազմակերպման պրակտիկան քառամյա տարրական կրթության համակարգում» գլխի առաջին՝ «Վաղ ուսուցման հիմնահարցի տեսությունն ու պրակտիկան» ենթագլխում քննարկում ենք վաղ ուսուցման հիմնահարցը՝ այն դիտարկելով ինչպես տեսության, այնպես էլ պրակտիկայի տեսանկյունից:

Այս գործընթացում ծագած դժվարությունների հաղթահարման նպատակով 6 տարեկան երեխաների ճանաչողական գործունեության իրականացման նոր ոլորտի՝ դասի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ ավանդական դասի 45 րոպե տևողությունը փոխվում է՝ դառնալով 30 րոպե, և ուսումնական գործընթացի մնացած 15 րոպեում իրականացվում են զանազան դիդակտիկ և շարժուն խաղեր, երեխաները երգում են, կառուցում, պարում են, ծեփում ու նկարում, կատարում են բնության դիտումներ:

Երրորդ գլխի երկրորդ՝ «Գրաճանաչության գործընթացի կազմակերպումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներում» ենթագլխում ներկայացնում ենք ԼՂՀ դպրոցներում մեր կատարած ուսումնասիրության խնդիրներն ու այդ ուղղությամբ իրականացրած աշխատանքները՝ հիմք ընդունելով զարգացնող ուսուցման և աշակերտակենտրոն, անհատակողմնորոշված ուսումնական գործունեության սկզբունքները:

Քառամյա տարրական կրթության առաջին՝ 2006-2007 ուսումնական տարում՝ գրաճանաչության ուսուցման շրջանից մեկ ամիս անց, ուսումնասիրեցինք մի խումբ առաջին դասարանցիների կարդալու նախնական կարողությունների մակարդակը (անցած տառերի սահմաններում). Արցախի 25 դպրոցներում (14-ը՝ քաղաքի և շրջկենտրոնների, 280 աշակերտ), մնացածը՝ գյուղական, որից 7-ը՝ համակազմ դասարանների (112 + 25 աշակերտ): Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ 417 առաջին դասարանցիներից 34-ն էին կարողանում դասանյութերը վարժ ընթերցել և թեմատիկ նկարի բովանդակությունը հասկանալով պատմել (4-5 նախադասությունից ոչ ավել):

Նշված գլխի երրորդ՝ «Նոր մոտեցում գրաճանաչության դասի պլանավորման և անցկացման գործընթացին» ենթագլխում մենք ներկայացնում ենք գրաճանաչության գործընթացում այսօր կիրառվող նոր մոտեցումները ԼՂՀ մի շարք դպրոցներում: Մեր ուսումնասիրությունների արդյունքերի վերլուծությունը ցույց տվեց, որ օգտագործելով երեխաների բազմաբնույթ մտածողության ընձեռած հնարավորությունները և դասի ընթացքում կիրառելով աշակերտակենտրոն համագործակցային աշխատանք՝ ստեղծվում է դասարանի յուրաքանչյուր աշակերտին աշխատեցնելու, ակտիվացնելու հնարավորություն, դասի յուրաքանչյուր րոպե, յուրաքանչյուր հնար միտված են դեպի աշակերտը, դեպի նրան աշխատեցնելն ու դասը նրա համար հետաքրքրական, արդյունավետ դարձնելը:

Նույն գլխի չորրորդ՝ «Անհատակողմնորոշված կրթության և բազմաբնույթ մտածողության դրույթների հիման վրա իրականացվող գրաճանաչության դասի առանձնահատկությունները» ենթագլուխը նվիրված է անհատակողմնորոշված

կրթության պայմաններում սովորողների բազմաբնույթ մտածողության ձևավորմանը և գրաճանաչության գործընթացի արդյունավետությանը:

Մեր բազմամյա մանկավարժական փորձի արդյունքների վերլուծության հիման վրա մենք առաջարկում ենք գրաճանաչության դասի կազմակերպման նոր ընթացակարգ, որը բխում է ժամանակակից դասի նպատակներից և համապատասխանում է պետական կրթական առարկայական չափորոշիչներով իրականացվող տարրական կրթության պահանջներին. աշակերտների մեջ ձևավորել գիտելիքների, ճանաչողական, հաղորդակցական, ստեղծագործական կարողությունների ու հմտությունների, բազմաբնույթ արժեքների համակարգ:

Երրորդ գլխի հինգերորդ՝ «Գրաճանաչության ավարտին սովորողների ձեռք բերած կարդալու կարողության մակարդակների ուսումնասիրությունը» ենթագլխում ներկայացրել ենք դիտարկվող հիմնախնդրի ուղղությամբ մեր կատարած ուսումնասիրությունները և դրանց արդյունքների վիճակագրական վերլուծությունը: Այս ենթագլխում մենք ներկայացնում ենք աշակերտների՝ կարդալու, գրելու, խոսելու և լսելու կարողությունների մակարդակները՝ ըստ մեր ուսումնասիրությունների և դրանց գնահատման ձևաչափերը:

Ընդ որում՝ ուսումնասիրություններում ընդգրկվել են Ստեփանակերտ քաղաքի 12 միջնակարգ դպրոցի 30 դասարանների՝ 718, Մարտակերտի շրջանի 7 դպրոցների՝ 88, Ասկերանի շրջանի 6 դպրոցների 7 դասարանների՝ 75, Մարտունու շրջանի 9 դպրոցների՝ 121, Հադրութի շրջանի 7 դպրոցների՝ 87, Շուշիի շրջանի 1 դպրոցի՝ 16, Քաշաթաղի շրջանի 2 դպրոցների՝ 13, Շահումյանի շրջանի 1 դպրոցի 5 աշակերտներ. թվով՝ 1123 աշակերտ:

Ստորև ներկայացվում են ուսումնասիրությունների արդյունքները նախքան մեր դիտարկումները և մեր դիտարկումներից հետո:

ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԼՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Մեր բազմամյա աշխատանքային փորձի և կատարած ուսումնասիրությունների արդյունքնում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հայոց լեզվի մեթոդիկայի պատմությունն ունի հայ երեխաներին գրաճանաչ դարձնելու հարուստ տեսություն և պրակտիկա, որոնց հիմքում ընկած մի շարք տեսական և գործնական դրույթներն այսօր էլ արդիական են, ժամանակակից մանկավարժական գիտությունների կողմից հիմնավորված և ընդունելի: Դրանց մի մասը կիրառվում է ինչպես ՀՀ տասներկուամյա հանրակրթական դպրոցի առաջին դասարանում, այնպես էլ սփյուռքի հայկական կրթօջախների նախակրթարաններում:

2. Այսօր անընդունելի է միայն պատմականորեն փորձարկված, արդարացված ավանդական մեթոդների մի մասի կամ նրանցից ընտրված առանձին հնարների գործածումը այբբենարաններում և դասագործընթացում՝ առանց հաշվի առնելու ժամանակակից կրթության առջև դրված նոր պահանջները, աշակերտակենտրոն, անհատակողմնորոշված մոտեցումների, փոխգործուն և ակտիվ մեթոդների համադրման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով գրաճանաչ դարձող սերունդների միջև առկա բազմաբնույթ և տարբեր հիմնավորում ունեցող տարբերություններն ու առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է փոխել, առավել ճկուն դարձնել գրաճանաչության դասի կառուցվածքը՝ այն բխեցնելով 6 տարեկան երեխաների տարիքային, հոգեբանական, կազմաբնախոսական առանձնահատկություններից, հաշվի առնելով նաև սովորողների բազմաբնույթ մտածողության ընձեռած ընդարձակ ու բազմաշերտ հնարավորությունները:

3. Գրաճանաչության գործընթացի արդյունավետությունը հիմնավորվում է դրա արդյունքում (ուսումնական տարվա ավարտին) աշակերտների ձեռք բերած կարդալու և գրելու (կարդալու բոլոր որակական հատկանիշների՝ տարրական մակարդակով պահպանմամբ)՝ ծրագրով նախատեսված որոշակի մակարդակի առկայությամբ, որը հնարավոր է իրականացնել, եթե գրաճանաչության գործընթացում մեթոդապես ճիշտ կատարվեն գրել - կարդալու կարողությունների ձևավորման երեք փուլերը՝ հաշվի առնելով վաղ ուսուցման նպատակները, խնդիրները և 6 տարեկան սովորողների տարիքային առանձնահատկությունները:

4. տարեկան երեխաների գրաճանաչության գործընթացն արդյունավետ է և չի վնասի նրանց հոգեկան ու ֆիզիկական առողջությանը, եթե այն կազմակերպված է աշակերտակենտրոն, անհատակողմնորոշված մոտեցումներով, ինչպես նաև դրանք ընկած են այդ տարիքի սովորողների համար ստեղծված այբբենարանների, ուսումնաօժանդակ նյութերի հիմքում: Միաժամանակ անհրաժեշտ է ուսուցման աշակերտակենտրոն, անհատակողմնորոշված մոտեցումները դարձնել ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման դասընթացների բովանդակության և կազմակերպման ձևերի առանցքը:

5. Նկատի ունենալով, որ գրաճանաչության ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդները կիրառելի են և արդյունավետ նաև երկհամակազմ դպրոցների սովորողներին գրել - կարդալ սովորեցնելու գործընթացում՝ ուսուցման այս ձևի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ստեղծել նոր սկզբունքներով կազմված այբբենարան՝ նկատի ունենալով առաջին դասարանների համակազմի ոչ միայն տարիքային տարբերությունները, այլև դրանցով պայմանավորված՝ ճանաչողական հետաքրքրությունները և գիտելիքների ու կարողությունների տարամակարդակությունը, արդի առաջին դասարանցիների և նրանց 10-15 տարի առաջվա տարեկիցների ակնառու մտավոր, հոգեբանական, ֆիզիկական տարբերությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Պետրոսյան Ա. Ա., Դպրոցում գործող այբբենարանները, նրանց մանկավարժական հիմունքները, ժող. «Հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի թեզիսներ, -Եր., «Համալսարան», 2005, էջ 80-82:

2. Պետրոսյան Ա. Ա., Սակավակազմ դպրոցների հիմնախնդրի շուրջ, «Մանկավարժական միտք», 2008, հ. 2-3, էջ 94-104:

3. Պետրոսյան Ա.Ա., Անձնակողմնորոշիչ դիրքորոշման և բազմաբնույթ մտածողության դրույթների հիման վրա իրականացվող դասի պլան-սեղմագրի մասին, ԼՂՀ «Հանրապետական երրորդ մանկվարժ. ընթերցումների ժողովածու», Ստեփանակերտ, 2008, 123-130:

4. Պետրոսյան Ա. Ա., Վեց տարեկաններ, նոր ծրագիր և ուսուցչին ներկայացվող նոր պահանջներ, «Մանկավարժական միտք», 2009, հ. 1-2, էջ 136-145:

5. Պետրոսյան Ա. Ա., Գրաճանաչության ավարտին սովորողների կարդալու, գրելու, լսելու և խոսելու կարողությունների մակարդակների ուսումնասիրությունը ԼՂՀ մի շարք դպրոցներում, «Կրթությունը և գիտությունը Արցախում»,2011, հ.1-2, էջ 99-108 :

ПЕТРОСЯН АННА АЛЕКСАНДРОВНА

СОВРЕМЕННАЯ ПРАКТИКА ОБУЧЕНИЯ ГРАМОТЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – “Методика преподавания и воспитания” (армянский язык).

Защита диссертации состоится 23.10.2014г. в 12.00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 375000, г. Ереван, ул. Тигран Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. История методики преподавания армянского языка богата разнообразными методами обучения грамоте. В течение многих десятилетий они были апробированы, некоторые из них дошли до наших дней и используются на практике.

В нашей работе проанализирован процесс обучения грамоте в первых классах средних школ в Нагорно-Карабахской Республике (НКР) с учетом требований и особенностей современного образования. В процессе нашей многолетней рабочей практики и целевых исследований (около 25 лет) несколько раз менялся начальный возраст обучения учащихся. За этот период мы были очевидцами и участниками процесса обучения, в котором участвовали семи- и шестилетние дети, которые из дошкольников превращались в учеников. Самым сложным при этом был период организации обучения грамоте, в течение которого обучающиеся должны были преодолеть ряд психологических, организаторских и учебных проблем.

Наше исследование позволило ответить на ряд вопросов: Какие проблемы возникают при обучении учащихся грамоте? Как преодолеваются? Как нужно организовать этот отрезок жизни ребенка, чтобы не нанести вреда его здоровью, чтобы не угасло его желание учиться и не снизилась мотивация? И наконец, как обучали грамоте наши предки, и какие из их подходов дошли до нас и находят применение в современной практике?

Цель исследования: изучить опыт, существующий в истории обучения грамоте армянского языка, в этом аспекте рассмотреть действующие учебники в Республике Армении, НКР и Диаспоре буквари армянского языка и проанализировать практику организации обучения грамоте в четырехлетних начальных школах НКР в первых классах, укомплектованных шестилетними детьми.

Задачи исследования:

1. Изучить историю методики армянского языка – применяемую как в восточноармянской, так и в западноармянской школьной практике, методы обучения грамоте, научные подходы к ним в истории армянской педагогики.

2. Рассмотреть процесс формирования грамотности в четырехлетней начальной школе Нагорно Карабахской Республики, выявить существующие трудности и порождающие их причины.

3. Изучить умение читать и уровень развития речи в конце учебного года у учеников первых классов, укомплектованных шестилетними детьми в НКР. Спланировать и опытным путем проверить наши научно-методические рекомендации, направленные на преодоление трудностей, возникающих на трёх этапах процесса обучения учеников грамотности, и повышение эффективности учебного процесса в условиях раннего обучения.

4. Обобщить полученные результаты исследования, разработать рекомендации, направленные на формирование необходимых для усвоения грамоты учебных умений учащихся, и сформулировать методические требования, необходимые для подготовки и переподготовки учителей.

5. Изучить особенности процесса организации изучения грамоты в некомплектных школах, на их основе разработать новый учебный комплекс (букварь и учебно-вспомогательные материалы), в котором будут учтены не только особенности процесса обучения грамоте учебной группы, укомплектованной детьми разного возраста, но и проблема превращения этого процесса в личностно-ориентированный.

Научная новизна исследования. Процесс исторического развития методики обучения грамоте в армянских школах изучен в условиях раннего обучения в четырёхлетней начальной школе. Рассмотрены и проанализированы научно методические основы как устаревших, так и современных букварей. Одновременно изучены особенности организации обучения в первых классах двенадцатилетних школ в НКР. В частности, выявлены возможности применения личностно-ориентированного обучения и сформулированы соответствующие методические выводы и заключения.

Теоретическая значимость исследования. Систематизированы исторические методы обучения грамоте в армянских школах. Предлагаемые методы рассмотрены с точки зрения психолого-педагогических принципов и с точки зрения успешности их применения в современной практике.

Практическая значимость исследования. Систематизирована комплексная информация, полученная в процессе наших исследований, также сделаны практические выводы-обобщения, которые могут быть полезны методистам и специалистам и коллективам, занимающимся созданием учебников и учебно-воспитательной деятельностью.

Апробации результатов исследования проведена в двенадцати средних школах г. Степанакерта (30 классов, 718 учащихся), в семи школах Мардакертского (7 классов, 88 учащихся), в пяти школах Аскеранского (7 классов, 75 учащихся), в девяти школах Мартунинского (121 учащийся), семи - Гадрутского (87 учащихся), в двух - Кашатагского (13 учащихся), в одной - Шаумянского (5 учащихся) и Шушинского (16 учащихся) районов НКР.

По теме диссертации опубликованы 5 научных статей.

ANNA ALEXANDER PETROSYAN

Literacy and Modern Teaching Practice

Dissertation submitted to obtain PhD in Pedagogical Sciences within the specialty of "Teaching Methods and Education" (Armenian Language), 13.00.02.
The public defense of the dissertation will take place on 15.04.2012 at 14.00 at session of Degree-awarding Specialized Scientific Council 020 at Khachatur Abovian Armenian State Pedagogical University.
Address: 375000, 17 Tigran Mets, Yerevan.

RESUME

The actual relevance of the research. The history of teaching Armenian is rich in various methods of teaching literacy. Our research particularizes the process of teaching analyzed at primary (initial) classes of secondary schools in the Republic of Nagorno Karabakh (NKR) in compliance with the demands and peculiarities of modern education.

The age determined as a pertinent one for starting the school education has been revised for several times, at least, in the course of our own long-term experience of targeted studies (for about 25 years). During that period we have been witnessing and actually participating in the process of overcoming the learning / teaching difficulties observed among preschool children newly engaged in schooling. The relevant observations have been carried out among schoolchildren of 7 and 6, and recently – school children of 6. The phase of literacy appears to be the most difficult one among these difficulties in the sense of solving curriculum problems, and, in particular, from pupils' standpoint in overcoming psychological, organizational and educational obstacles. Thus, which are these problems, how are they solved, how must that period of life of a child be organized, without undermining the youngster's health and without fading the children's learning desire and motivation? And finally, how did our ancestors organize the literacy of a child and which of their methods has reached us and are used in modern practice?

The aim of the research is to study the experience and the period of development existing in the history of literacy of the Armenian language. From that angle, this research is aimed at observing the alphabets of the Armenian language used in the Republic of Armenia, in NKR and in Armenian Diaspora, as well as, at analyzing the actual experience of organizing literacy in the first form, namely, among 6-year-old children at four-year elementary school of NKR.

The issues addressed in the research:

1. To study acceptable and deniable aspect of the methods of literacy used in both West Armenian and East Armenian parts of the history of methodology of the Armenian language, and the analytical approaches about them in the history of Armenian pedagogy.
2. To observe the period of scheduling literacy at four-year elementary school of NKR, in order to reveal the existing difficulties and the factual reasons.

3. To study the levels of reading skills and of speaking skills among 6-year-old pupils of the first class in NKR at the end of academic (school) year. To plan and check by an experiment that our own methodological guarantees certain degree of efficiency and facilitates the process of overcoming the difficulties that emerge during the 3 phases of literacy at early learning age.

4. To summarize the conclusions obtained during the studies, to develop methodological bases aimed at developing the reading skills and contributing to general literacy in accordance with the requirements of both literacy and teacher training in the realm discussed.

5. To study the characteristic features of the process of organizing literacy in schools with limited number students, to develop new educational complex (alphabet, guidelines, and additional instructive materials), in which not only the features of the process of making the group of children of different ages literate, but also the problem of making that process individual-oriented will be taken into account.

The scientific novelty of research. The process of historical development of methods of teaching literacy in Armenian schools is studied in the conditions of early-age teaching (4th year, primary schools). The scientific and methodological bases of both historical and modern ABC-books are studied and analyzed. Simultaneously, the organization of teaching is studied as well, including the primary level of 12-year schools in NKR. Particularly, the opportunities of using self-education are investigated and appropriate methodological conclusions and deductions are formulated.

The theoretical value of research. The historically confirmed methods of teaching literacy in Armenian schools are systematized. The methods suggested are detailed from the perspectives of psycho-pedagogical principles viewed through the criterion of the actual efficiency of their usage.

The practical value of research. The research comprises systematized complex information gained in the course of our investigation together with pertinent practical deductions and summaries which could be useful for both methodologists and similar experts.

The results of investigation have been tested in 30 different level groups at 12 schools in Stepanakert (718 pupils involved), in 7 different level groups at 7 schools in Martakert region (88 pupils involved), in 7 different level groups at 5 schools in Askeran region (75 pupils involved), at 9 schools in Martuni region (121 pupils involved), at 7 schools of Hadrout region (87 pupils involved), at 2 schools in Kashatagh region (13 pupils involved), at 1 school in Shahumyan region (5 pupils involved) and in Shushi region (16 pupils involved).

Five scientific articles have been published on the theme of the dissertation submitted.